Ալեքսանդր Ծատուրյան

Նավավար

— Է՛յ, նավավար, ի՞նչ ես անում,
Ո՞ւր ես նստում դու նավակ,
Սև ամպերն են, տե՛ս, բարձրանում,
Դեպի երկինք կապուտակ:

Հորիզոնն էլ մութով պատած,
Հեռվում ամպն է որոտում,
Նայի՛ր, ծովն էլ կամա՛ց-կամա՛ց
Պարզ երեսն է կնճռոտում . . .

Է՛հ աղա՛ ջան, դարդ մի՛ արա,
Ծովափին եմ ես ծնվել
Մեծացել եմ ծովի վրա,
Ծովի ջրրով միշտ սնվել:

Մանուկ օրից շա՛տ եմ տեսել,
Ե՛վ փոթորիկ, և՛ աղետ,
Ծովն է ինձ միշտ օրոր ասել,
Նո՛ր չեմ ծանոթ ծովի հետ:

Հայր ունեի – ծովում կորավ,
Որսի ելած մութ գիշեր,
Նրան ալիք լափեց, կերավ,

Նա ձկնորս էր անվեհեր:

Ծովում կորցրի երկու եղբայր,
Նավավարներ ինձ նման,
Որ իմացա-երկինք, աշխարհ,
Ասես, գլխիս փո՛ւլ եկան . . .

Է՛հ աղա՛ջան, դարդ մի՛ անիլ,
Թե ծովն ինձ էլ կուլ կըտա,
«Կուժն ամեն օր ջուր չի բերիլ» . . .
Ամեն բանի վե՛րջը կա . . .

Կյանքը լավ է . . . բայց ի՞նչ արած,
Համ էլ մահից, ի՞նչ փախչեմ . . .
Ծովն է տալիս մեզ կյանք ու հաց,
Ծովի տակ էլ կըհանգչեմ . . . »:

Ասաց, շարժեց նա թիակներ
Եվ բարձրաձայն երգելով,
Քաջ սլացավ ծովի խորքեր,
Սև ալիքներ ճեղքելով . . .